ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. նոյեմբերի 28-30-ը

Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

Վարոս Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. նոյեմբերի 28-30-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը՝

- Մասնակցություն Եվրասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Եվրասիական տնտեսական ինտեգրում» 14-րդ միջազգային համաժողովին,
- Աշխատանքային հանդիպում ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակալ, հավատարմագրման ՌԴ ազգային մարմնի ղեկավար Ալեքսեյ Խերսոնցևի հետ:

6. Քննարկված թեմաները՝

- Ձեռնարկատիրության և արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հիմնախնդիրներ, ներառյալ փոքր և միջին գործարարության ոլորտում ներդրումային միջավայրը, ազգային և համատեղ արտադրված ապրանքների արտահանման խթանումը, վերականգնվող էներգետիկայի նախագծերի իրականացումը, ինտեգրմանը և ֆինանսական շուկաներին առնչվող այլ խնդիրներ,
- Երկու երկրներում որակի ենթակառուցվածքի ոլորտների, մասնավորապես՝ հավատարմագրման, համապատասխանության գնահատման և ստանդարտացման առկա իրավիճակը, զարգացման միտումներն ու հետագա ծրագրերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Համաժողովի ընթացքում «Եվրասիական զարգացման բանկի մասնակից պետությունների արտահանումների խթանում արտաքին շուկաներ» թեմատիկ խմբում Վ. Սիմոնյանը հանդես է եկել ելույթով՝ հիմնական շեշտադրումը կատարելով երկրների ինտեգրման ներկայիս փուլում խնդրահարույց բնագավառներում փոխհամագործակցության ակտիվացման վրա:
- Աշխատանքային հանդիպման ընթացքում ՌԴ կողմին ներկայացվել են ՀՀ հավատարմագրման ոլորտում իրականացվող բարեփոխումները, ԵԱՏՄ երկրներում

համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքում տրված փաստաթղթերի հետ կապված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների արդյունքում որոշում է կայացվել ուսումնասիրել երկրների համապատասխան ոլորտների առաջադեմ փորձը՝ այն տեղայնացնելու և կիրառելու նպատակով, միջոցներ ձեռնարկել միջազգային ստանդարտներին համապատասխան գործունեություն իրականացնելու ուղղությամբ, ինչի արդյունքում հնարավոր կլինի խթանել և առանց խոչընդոտների իրականացնել ապրանքաշրջանառությունը ԵԱՏՄ միասնական շուկայում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մեկշաբաթյա ընթացքում, իսկ հետագայում պարբերաբար տեղեկատվություն փոխանակել փորձարկման արձանագրությունների վերաբերյալ, հայկական կողմին ներկայացնել ՌԴ հավատարմագրման ազգային մարմնի կողմից մշակված էլեկտրոնային համակարգի գործառույթները և չափման միավորների ՌԴ պետական առաջնային էտալոնների, միջլաբորատոր փորձարկումների պրովայդերների վերաբերյալ տեղեկատվություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

2 դեկտեմբերի 2019թ.